

ԴԻՑԱՐԱՆԱԿԱՆ

ՔԱՐԻ ՊԱՅՄԱՆԱՅԻՆ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Ա.

Հայ ժողովրդական հաւատալիքների մէջ իւրաքանչիւր տեղ է բռնում քարի պաշտամունքը: Դեռ եւս ըստ Ագաթանգեղոսի պատմութեան՝ իբր թէ Գրիգոր Լուսաւորիչը նորադարձ քրիստոնեայ հայերի նախորդներին քարապաշտ է անուանել: Քարի պաշտամունքն իր էութեամբ ու բովանդակութեամբ հոգեպաշտական է: Դա կրօն է, այլ մի աշխարհահայեացք է, որ բղխելով նիւթական հիմունքներից բնորոշում է նախնական մարդու յարաբերութիւնները դէպի շրջապատ բնութիւնը քարէ դարաշրջանում:

Նախնական մարդու զգացումների եւ մտածումների աշխարհը պայմանաւորում է նրա կենցաղավարքի ձեւերից, նրա արտադրական ուժերից, մի խօսքով՝ այն նիւթական բնութիւնից, որի հետ նա հանապազ չփոխում է, որին համակերպում է իր կեանքն ու գոյութիւնը:

Նախապատմական Հայաստանն, ինչպէս եւ այժմ ենք տեսնում, գերազանցօրէն քարոտ բնութիւն էր ներկայացնում — լեռնային շղթաներ, բարձրաբերձ սարեր, ցից կամ կախ անարկու ժայռեր, խորհրդաւոր անդունդներ ու ձորեր, մի խօսքով՝ քարեր, անվերջ քարեր . . . Այդ քարերի միջից էին ժայթքում հուր եւ լաւա, սարերի դազաթներից էին բարձրանում ծուխ եւ որոտ: Սարերի լանջերից, քարոտ ակունքներից էին բղխում գետերը, վճիտ ջրերը: Սարերում եւ ձորերում էին վխտում վայրի գազանները, որսի կենդանիները: Վերջապէս սարերի մէջ էին այն բազմաթիւ անձանները. քարերի ու ժայռերի արանքներումն էին այն անվերջ խոռոչները, որ օթեւան ու պատրուկ պարան էին նախնական մարդուն տալիս: Ահա այն բնութիւնը, որտեղ ապրում էր նախնական Հայաստանի մարդը:

Այդ հարուստ քարէ միջավայրից էր նա ձեռք բերում իր առաջին գործիքներն ու գէնքերը: Սկզբում անտաշ քարէ բեկորներն եւ ապա յղկած, տաշած կտորները դառնում էին նրա գանակը, մուրճը, կացինը, սղոցն

եւ այլն եւ այլն: Կայծաքարի առաջին, սկզբները դիպուածական, հարուածից ցայտող կայծը դարձաւ այն կենարար կրակը, որ հետագայում նախնական մարդը արդէն փորձում էր ստանալ ըստ իր կամքի, դուրս հանելով այդ կայծերն իրենց քարէ թաքստի խորքերից արհեստական հարուածների միջոցով: Քարէ բնութիւնից վերցրած այդ գործիքներն ու գէնքերը նախնական մարդը դարձնում էր նոյն այդ բնութեան դէմ, պայքարելով, կռուելով նրա ուժերի դէմ՝ իր գոյութիւնն պահելու, իր կենսական պայմանները ստեղծելու համար: Քարէ գործիքներով ու գէնքերով սկսեց դարգանալ նախնական մշակոյթը: Ահա նախնական Հայաստանի բնիկի միակ արտադրական միջոցները:

Պարզ է, որ այդ քարերի հետ էին կապւում նրա մտածումներն ու զգացումները այդ քարէ միջավայրումն էր կառուցւում նրա հոգեպաշտական աշխարհը: Ո՛չ այժան ծառերն ու ջրերը, որքան քարերն էին դառնում ժողովրդական հաւատալիքների մէջ պաշտամունքի առարկայ: Թերեւս միայն կենդանիներն են, որ նոյնքան գրեթէ տեղ են գրաւում իրեւ պաշտամունքի առարկայ եւ մրցում նրա հետ: Քարերը, ինչպէս եւ մարդը, պարունակում են իրենց մէջ հոգի. այդ հոգին զգալ է տալիս իր մասին ամէն մի քայլափոխում նախնական մարդու կեանքի մէջ, սկսած նրա ծննդից մինչեւ մահը, նրա բոլոր յարաբերութիւններում դէպի շրջապատ բնութիւնը: Այսպէս էր մտածում եւ զգում նախնական մարդը:

Եւ այդ մտածումների ու զգացումների աշխարհից հեռու չի գնացել նաեւ ժամանակակից Հայ ժողովրդական հաւատալիքը, որ կրում է իր մէջ քարէ դարերի շրջանից մնացած ցայտուն հետքեր:

Հնագիտութիւնից յայտնի է, թէ ինչ մեծ տեղ էր բռնում քարէդարեան գործիքների մէջ վանակատը՝ արսիղիանը, որ ժողովրդական լեզուով կոչւում է «սառանի եղունգ»: Այդ վերջին անուան մէջ պարզ նշմարւում է քարէդարեան մարդու երբեմնի մտածողութիւնն՝ վանակատի արուեստական նշանակութիւնը (քերելու, տաչելու, կտրելու եւ այլն) նոյնացնելու գերբնական,

1 Յես մեր «Տոսեմիզմը հին հայերի մէջ» յօդուածը «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», հատոր Ա.—Բ. էջ 15—34, էջմիածին. 1921—1922 թ.:

անտեսանելի ոգուն պատկանող անգամին այն է ձեռքին, իբրեւ մի գործիք: Նոր-
Ռայազիդի գաւառում կայ մի ժողովրդական
աւանդութիւն, թէ եւ քրիստոնէական չա-
րով ծածկուած, որի մէջ արտացոլում է
վանակատի նշանակութիւնն որպէս արուես-
տական գործիքի եւ միեւնոյն ժամանակ
պատկերաւոր արտայայտում է, թէ ինչ-
պէս քարէ գործիքները փոխանցուել են մե-
տաղէ, ներկայ դէպքում երկաթէ, գործիք-
ները: «Մի անգամ չարը — պատմում է
այդ աւանդութեան մէջ — ագուաւի կերպա-
րանքով՝ վերցրել է սատանի եղունգ եւ մոր-
թել է մի ուրիշ ագուաւին: Կայէնն, այդ
տեսնելով, ինքն էլ վերցրել է մի այդպիսի
եղունգ եւ մորթել է Արէլին: Մորթելիս
եղունգը փչրուել է: Այնուհետեւ Կայէնն հե-
տամուտ է եղել աւելի կարծր նիւթ գտնե-
լու, որ կտրելիս այլեւս չփչրուի: Ինքն այդ
չի կարողացել գտնելու եւ աւանդ է թողել
իր որդիներին, որ նրանք այդ գտնեն: Սրանք
երկար որոնելուց յետոյ գտել են երկաթը»:

Արդեօք նոյնպէս նախապատմական քա-
րադարեան չըջանն բնորոշող տարրեր չի՞
պարունակում Տորք Անդեղի մասին Մովսէս
Խորենացու պատմութեամբը, որ ըստ ամե-
նայնի վերցուած է ժողովրդական առասպե-
լական աւանդութիւնից. «Քանդի երգէին
նմա բուռն հարկանել գործաքար վիմաց
ձեռք, ուր ոչ գոյր գեղութիւն, եւ ճեղքել
ըստ կամաց մեծ եւ փոքր. եւ քերել ըզըն-
գամբք ե կազմել որպէս ծախտակ, եւ գրել
նոյնպէս ըզընգամբք իւրովք արծուիս եւ
այլս այսպիսիս . . . » (Գիրք Բ., գլ. Ը):
Պարզապէս այդ առասպելի մէջ պահպանուել
են հետքիւր այն չըջանից, երբ մարդիկ իրենց
ճարտարարուեստը, արտայայտում էին մի-
այն սեփական ձեռքերով ու քարերով:

Բ.

Հայ ժողովուրդը հաւատում է, որ լեռ-
ները, քարէ բլուրները, ժայռերը հանդի-
սանում են ոգիների բնակարաններ: Քաջք,
բարի կամ չար ոգիներն են այնտեղ հանգչում
եւ իրենց ազդեցութիւնն տարածում մարդ-
կանց վրայ: Եթէ նախաքրիստոնէական շր-
ջանում այդ տեսակ հաւատալիքները տոգո-
րուած էին հեթանոսական կրօնի գոյներով
եւ պարփակում էին հեթանոսական պաշտա-
մունքի տարրեր, ընդհակառակն քրիստո-
նէական շրջանում նրանք ընդունում են ար-

դէն քրիստոնէական սրբութիւնների նշանա-
կութիւն:

Դերեւա Մովսէս Խորենացին է աւան-
դում հնադարեան ժողովրդական հաւատա-
լիքներից, թէ ինչպէս Մասիս լեռան խորքե-
րումն է գտնուում Արտաւազդը, իբրեւ մի չար
ոգի, որ պատրաստ է դուրս ելնելու եւ պա-
տուհաս բերելու մարդկանց: Այդ հաւատա-
լիքը նոյնութեամբ պահպանուել է ժողովր-
դի մէջ մինչեւ այսօր իսկ, կամ փոխուել է
այլ տեսակի, ինչպէս Նոր-Ռայազիդի գա-
ւառում, որտեղ ժողովուրդը պատմում է,
թէ Մասիսի կողերին ապրում են «եօթ գըլ-
խանի հրեշներ»: Նոյն բնոյթն է կրում մի
այլ ժողովրդական վիպասանութեան հերոս
Մհերը, որ անհետացել է լեռան մէջ ու այն-
տեղ փակուած է մնում «Մհերի դրան» ետե-
ւը, մինչեւ որ նորից լոյս աշխարհ ելնի:

Գանձակի գաւառի Գետաչէն գիւղի մօտ
Քաջքաձորում կայ մի ահագին ժայռ, որ
Քաջքարուն է կոչւում, որովհետեւ ժողո-
վրդի ասելով՝ այնտեղ քաջքեր են ապրում:
Նմանապէս այսօրուայ Վասպուրականցին
հաւատում է, թէ Արճեշ գաւառի արեւելեան
կողմը գտնուող բարձր լեռը «Քաջաց կայան»
է: Նոյն Վասպուրականում նուիրական է
համարւում Մոքա գիւղաքաղաքի հարա-
ւային կողմը գտնուող բարձր քարաժայռը,
որ կոչւում է «Արծուաքար» եւ որի մէջ իբր
թէ ապրում են «հուրի-փերիներ». նաեւ
նուիրական է համարւում Արճեշի արեւելեան
սահմանում գտնուող «Օձ-քարեր» անունով
քարաբլուրը, ուր իրօք ծերպերի մէջ վրի-
տում են քարաթոթոշներ ու օձեր:

Բնական է, որ այդ ահարկու սարերի
մէջ եղած քարայրներն ու անձաւներն էլ
նոյն զգացումներն ու մտածումներն են դար-
թեցնելու եւ նոյն հաւատալիքների առարկայ
դառնում: Նոր-Ռայազիդի գաւառում հա-
ւատացնում են, որ քարանձաւներում ապ-
րում են «թափաղեօղներ» կամ «քեալա-
ղեօղներ». սրանց վերաբերեալ ժողովրդա-
կան աւանդութիւնն զարմանալիօրէն յար
ու նման է Հոմերոսի Ոդիսականի մէջ եղած
կիկլոպների պատմութեանը: Նոր-Ռայա-
զիդից 2 վերստաչափ դէպի արեւելք գրտն-
ւում է «Ս. Ոհաննիսի քարայրերը», որ այս-
օր նախկին հեթանոսական, գուցէ նախա-
պատմական քարէ զարաշրջանից պահպանել
է իր պաշտամունքային բնոյթը, բայց ըն-
դունելով արդէն քրիստոնէական սրբու-

Թեան դրոշմ: Նման քարանձաւներ ու ալրեր բազմաթիւ են Հայաստանում: Այս հաւատալիքը մեզ տանում է դէպի այն ժամանակները, երբ նախապատմական Հայաստանում բնիկն ապրում էր քարայրներում եւ իր մեռեալներին էլ թողնում էր կամ թաղում էր ալրերում, որոնք այդպիսով դառնում էին ոգիների բնակարան-օթեւաններ: Այդօրինակ փաստեր գտնում ենք թէ՛ Եւրոպայի եւ թէ՛ Ասիայի զանազան ժողովրդների քաղաքակրթութեան պատմութեան մէջ, որպէս բնորոշ գիծ քարէղարեան շրջանի հնագիտական մնացորդների:

Ոչ միայն հսկայական սարերը, քարաբլուրները, ժայռերն են հանդիսանում քաղքերի ու ոգիների բնակարան, այլ եւ հատ ու կտոր քարերը: Քրիստոնէական հաւատալիքների մթնոլորտում այդ տեսակ քարերն անշուշտ դառնում են սրբութիւններ, որոնք կապուած են այս կամ այն սրբի անուան հետ եւ դառնում են յարգանքի առարկայ:

Վասպուրականում՝ Մոքսի Ս. Ամենափրկիչ եկեղեցու մասին աւանդութիւն կայ, որ նա կառուցուել է այն վէմքարի վրայ, որի մէջ են մտել Քրիստոսի մազերը, թռչելով Գասպար մոգի գրկից: Նոյնպէս Վասպուրականի Փութկու Ս. Գեւորգ կոչուած վանքը իբր թէ շինուել է այն քարի վրայ, որ պատրուել է եւ իր մէջն է ընդունել Ս. Գէորգի ականջն պարունակող պտտուկը: Նոր-Բայազիդի, ինչպէս եւ շատ գաւառներում հայերը հաւատում են, որ ամպրոպի ու կայծակի ժամանակ սատանաները մտնում են քարերի տակ կամ պահուած նրանց մէջ:

Ժողովրդի պաշտելի են նաեւ կայծակահար քարերը, որոնք կոչւում են «կեծաքար»: Մեր ժողովրդական հաւատալիքով «կեծաքարի» մէջ, ինչպէս նաեւ նախապատմական մարզն էր համոզուած, թաղնուած է կայծակը, որ նորից դուրս է թռչում առանձին կայծերով, երբ քարը զարնւում է կարծր բանի: Այդ «կեծաքարից» ցայտող կայծերից է բռնկում նաեւ կրակը, որ հսկայական նշանակութիւն է ունեցել նախապատմական մարդու կեանքում, նոր դարաշրջան կադմեւով նրա գոյութեան կոռուում: Այս հանգամանքի հետ է կապուած ժողովրդական այն սնտրիապաշտութիւնն, որ կայծակի ու ամպրոպի ժամանակ հայերը վերցնում են մէկ քար եւ դնում իրենց գլխին:

Առանձին քարերի, իբրեւ ոգիների կայանների, այդ նախապատմական ու աղա նախաքրիստոնէական պաշտամունքի՝ մնացորդներ պահպանուել են նաեւ հայ եկեղեցական կանոններում: Եկեղեցի կառուցուել կարող է, ըստ այդ կանոնների, միայն վէմքարի վրայ, որ իբրեւ սրբութիւն անշարժ ու անտեղահան է լինելու:

Հայ ժողովրդական հաւատալիքներում այդքան տարածուած քարապաշտամունքը զարմանալի նմանութիւն ունի մեր ժամանակակից մի քանի վայրերի ցեղերի մէջ տիրող այդ տեսակ հաւատալիքներին, էլ չենք ասում կովկասեան ու այլ ասիական ժողովրդների մասին: Հայ ժողովրդի պաշտած առանձին քարերը — նոյն քարէ «չուրինգ»-ներն են, որոնց ամենայն խորհրդաւորութեամբ երկրպագում, պաշտում է տակաւին այսօր էլ քարէղարեան մակարդակից դուրս չեկած վայրերի աւստրալիացին:

Գ.

Ինչպէ՞ս են գոյանում ժայռերի ու քարերի մէջ ոգիները. ինչպէ՞ս են այդ քարերը դառնում հոգիների կայաններ, բնակատեղեր: Աւստրալիայի ժամանակակից վայրերի մէջ, որոնք, ինչպէս ասացուցել են նրանց մէջ 20 տարի շարունակ ապրած ու հետազօտութեամբ զբաղուած Սպենսեր ու Դիլլեն գետնականները, տիրում է այն համոզումն, թէ մեռեալի հոգին միշտ տեղափոխւում է որեւէ քարի մէջ, այնտեղ գտնելով իրեն համար նոր օթեւան: Եթէ իսկ մեռեալի քով քար չլինի, նրա հոգին մտնում է գետին, որտեղից յետոյ դուրս է գալիս մի քար, որպէս զի անմոռաց պահէ հոգու կայանի տեղը:

Նոյն այդ հաւատալիքներին հանդիպում ենք հայ ժողովրդական հին կենցաղում: Հայ գիւղերում, երբ մեռեալին տանից դուրս են բերում հանգստարան տանելու, նրա դագաղի տեղը դնում են մէկ քար, «որպէս զի յիշատակը հաստատ մնայ», կամ ինչպէս Լօռեցին է ասում՝ «ոտը ծանդր ըլի օջախի վրայ»: Արդեօ՞ք նոյն այդ դադափարը չի պարունակում բոլոր ժողովրդների մէջ համատարած սովորութիւնն, այն է՝ գերեզմանի վրայ տապանաքար կամ սոսկ մի քանի կտոր քարեր դնելը: Այդտեղից էլ ծագում են այն բազմաթիւ «խաչքա-

րերը», «ծակ-քարերը», «թուխ-մանուկները» եւ այլն, որոնք այնքան տարածուած են Հայաստանում, ամենահին ժամանակներից կանգուն մնալով. խաչքարեր, որոնք ներկայումս այս կամ այն սրբի ու նահատակի անունով են յայտնի կամ նրանց դերեզմաններ են համարւում եւ որոնք, իբրեւ «գորաւոր» քարեր, պաշտամունքի առարկայ են դարձել հայ ժողովրդական զանգուածների մէջ:

Հոգեպաշտական հաւատալիքներով սնուած հայ ժողովրդի մէջ այն համոզումն էր տիրում, թէ մեռելի հոգին տեղափոխւում է քարի կամ ծառերի եւ կամ կենդանիների մէջ: Սակայն ծառերն ու կենդանիներն ինքնին յաւիտենական չեն. նրանք էլ ժամանակի ընթացքում ոչնչանում են: Բայց քարը մնում է անյիշելի տարիներով կանգուն եւ ուրեմն աւելի ասպնով օթեւան է ներկայացնում մեռելացիների հոգիների համար: Այդ պատճառով քարերը, իբրեւ պաշտաման առարկայ, աւելի համատարած են: Նախապատմական հայր քարերի մէջ էր ասպրեցնում այն հոգիներին, որոնք էական նշանակութիւն ունեն նրա կեանքում, նրա գոյութեան պայքարում: Նախահայրերը, ժողովրդական հերոսները, առաջնորդները, տոհմական հիմնադիրները, մոգերն եւ այլն, որոնց հոգիները շարունակում են նախկին ազդեցութիւնն պահպանել կենդանի մնացած տոհմակիցների նկատմամբ, անշուշտ մնալուն յիշատակի են արժանանում եւ դառնում են սրբազնացած քարէ յուշարձաններ: Նրանց յիշատակի հետ է կապում ժողովուրդը իր առտնին կեանքի, իր տնտեսական բարօրութեան, իր ֆիզիկական գոյութեան հանգամանքները:

Այնտեղ, ուր պայքարը բնութեան ուժերի դէմ, ուր մարդկային աշխատանքը, արտադրական միջոցներն ու ձեւերը տակաւին պահում են մարդուն չընկալաւ բնութեան բացարձակ տիրապետութեան ներքոյ եւ զղալ են տալիս մարդու անհատական անօգնականութիւնն ու անվերապահ կախումն այդ բնութիւնից, այնտեղ մարդը օգնութիւն եւ նեցուկ է որոնում այն ոգիների մէջ, որոնք ըստ դարեւոր աւանդութեան իր գորաւոր նախնիքների հոգիներն են եղել, այժմ քարերի մէջ բնակուող: Եւ նախնական մարդն իր ամէն մի քայլը կապում է այդ ոգիների հետ, իր բոլոր գոր-

ծողութիւնները դնում է նրանց հովանուներքոյ, հաւատացած նրանց զօրութեանը, համոզուած, թէ այդ ոգիները չընկալաւ բնութեան բաղկացուցիչ մասն են կազմում եւ պատրաստ են որոշ հանգամանքներում իրեն օժանդակել, իր անկար վիճակին նըպաստաւոր պարագաներ հայթայթել:

Այդ հաւատը դէպի քարերի մէջ փոխուած հոգիները անհուն դարերի ընթացքում վերածւում է ֆետիշիզմի, մի տեսակ նիւթականանում է: Նախնական մարդու ֆետիշիստական հայացքներում սոսկ քարն է դառնում պաշտամունքի, երկրպագութեան առարկայ եւ ոչ թէ նրա մէջ ապրող ոգին: Այդ քարն է այժմ հանդիսանում այն գերբնական զօրութիւնը, որ իրեն օգնելու է գոյութեան կուում, բնութեան ուժերի դէմ: Խաչքարերը, ծակ-քարերն եւ այլն դառնում են արդէն մի տեսակ կուռքեր:

Ահա հայ ժողովրդական հաւատալիքների մէջ նկատելի են մի կողմից՝ հոգեպաշտական մնացորդներ, ուրեմն աւելի հնագոյն քարէղարեան քաղաքակրթութեան հետքեր եւ միւս կողմից՝ առաւելապէս ֆետիշիստական մնացորդներ, որոնք հանդիսանում են քարէղարեան աւելի նորագոյն (նէոլիտի) շրջանն բնորոշող գծեր:

Երևան:

Խ. ՍԱՄՈՒԷԼՅԱՆ

(Շարունակելի):



Մ Ի Հ Ր Ը Հ Ա Յ Ո Ց Մ Է Ձ

Ա.

Մ Ի Հ Ր Ա Ն Ո Ւ Ն Ը

1.

Հայ հեթանոսական կրօնն ուսումնասիրողները կրակի ու արեւի աստծուն — Միհրին շատ երկրորդական տեղ են յատկացնում հայ դիցաբանութեան մէջ: Այսպէս, օրինակ, Մ. Էմինն ու Հ. Գեղեքը հայ դիցաբանութեան մասին գրած տեսութիւնների մէջ այս աստծուն նուիրում են մի քանի տող միայն¹: Այս ընթացիկ կարծիքի հակառակ պէտք է ասել, որ Միհրի պաշտամունքը շատ

¹ Н. О. Эмин, "Исследования и статьи", Москва, 1896, էջ 26—27 ու Հ. Գեղեք, "Հեթանոսութիւն հայ դիցաբանութեան", "Բաղմալեպ", Վենետիկ, 1897, էջ 21: